ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ
Գործողություն 6.5
Զրի հաշիվների կազմում II

Զրի հաշիվներ

Երևան, 2017թ. մարտի 27-30

STATISTICS DENMARK

Պարտադիր արդյունք

Սույն գործողության պարտադիր արդյունքը ՊԱ7

Կազմված ջրի հաշիվներ (2017թ. հուլիս)

Չափանիշներ

- Տվյալների աղբյուրների գույքագրում (հասանելիություն, տեղեկատվական հոսք) սահմանված ջրի հաշիվների համար (2016թ. ապրիլ)
- Ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն (2017թ. հունվար)
- Հանդիպում շահառուների հետ (2017թ. հուլիս)
- Կազմված ջրի հաշիվներ (2017թ. հուլիս)

6.5 առաքելության նպատակը և սպասվող արդյունքը

Նպատակը

- Ջրի հաշիվների կազմում
- Ինչպես ինտեգրել ջրի հաշիվները ազգային հաշիվների մեջ
- Քննարկումներում ընդգրկել համապատասխան շահառուների

Սպասվող արդյունքը

- Առաքելության հաշվետվություն առ այն, թե ինչպես կազմել ջրի հաշիվները, և ինչպես ինտեգրել ջրի հաշիվներն ազգային հաշիվների մեջ
- Հաջորդ վերջին գործողության համար աշխատանքային ծրագրի սահմանում.
  - 6.6. Ջեռքբերումների և ապագայի համար առաջարկությունների ստուգողական դիտարկում (2017թ. մայիսի 22-25)

Եզրակացություններ (1)

- ՀՀ ԱՎԾ-ն լավ աշխատանք է կատարել Երևանում կայացած նախորդ Իստատ առաքելության ընթացքում ներկայացված առաջարկությունների և ճանապարհային քարտեզի վերաբերյալ

- Ջրի վիճակագրության (ՋՎ) և Ջրի Հաշիվների (ՋՀ) աղյուսակների վերլուծությունը, որն իրականացվեց այս օրերին, պարզաբանեց որոշ արդեն իսկ լրացված թվեր՝ հաշվի առնելով միջազգային վիճակագրական ստանդարտները (ՄԱԿ, Եվրոստատ)

- Ամրապնդվեցին որոշ կոնկրետ կողմեր, որոշելու համար հայկական տվյալների բազաներում հավաքագրված տեղեկատվության օգտագործման լավագույն ձևը ՋՎ և ՋԱ աղյուսակների կազմման համար: Մասնավորապես, անդրադարձ կատարվեց Հայաստանի գյուղատնտեսությանը:

Եզրակացություններ (2)

- Մենք արդյունավետ քննարկում ենք իրականացրել ՋՎ և ՋՀ աղյուսակների ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ
- Քննարկումները վերհանեցին երկրին բնորոշ երևույթներն ընդգծելու հարմարությունը
- Մենք քննարկեցինք ՋՎ և ՋՀ վերջնական արդյունքի տարածման հարցեր
- Ինչպես միշտ, և մեկ անգամ ևս, թիմային աշխատանքը շատ արդյունավետ էր և համապատասխանում էր թվինինգ ծրագրի նպատակներին, փորձի և արդյունքների փոխանակմանը

Առաջարկություններ (1)

- Շարունակել խորությամբ ուսումնասիրել պաշտոնական վիճակագրական ձեռնարկները, մասնավորապես SEEA-ջուրը, որը ջրի ֆիզիկական հոսքերի հաշիվների և ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակների հաջող կազմման հիմնական պայման է հանդիսանում

- Շարունակել ստուգել աղյուսակներում լրացված տվյալները և դրանց փոխկապակցվածությունը պահանջվող տեղեկատվության հետ
- Կասկածների և անորոշությունների դեպքում ՀՀ ԱՎԾ աշխատակիցները պետք է կապ հաստատեն Իստատի փորձագետների հետ, անհրաժեշտ աջակցություն ստանալու և խնդիրները և դրանց լուծումները քննարկելու համար

Առաջարկություններ (2)

- Տեղյակ լինել, որ մեթոդաբանությունը և ցուցանիշները հետագայում պետք է կանոնավոր կերպով գնահատվեն ՀՀ ԱՎԾ և շահառուների կողմից, հավաստիանալու, որ սպառողների կարիքները բավարարվում են

- Հաստատել հիմնական շահառուների հետ կանոնավոր հանդիպումների համակարգ՝ տվյալների աղբյուրների ապագա կայունությունը (և հետագա զարգացումը) երաշխավորելու համար

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց (1)

ՀՀ ԱՎԾ կողմից կատարվելիք տնային աշխատանքը մինչև մայիսի վերջնական առաքելությունը.

- Ներքին ջրերի համատեղ հարցաթերթի, ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակների և ջրի փոխանակման մատրիցայի վերջնական իրականացում
- Ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակներից ստացված ցուցանիշների հաշվարկ
- Ցուցանիշների արտադրման ընթացքում երևան եկած կրիտիկական կետերի քննարկում Իստատի հետ

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց (2)

- Ի լրումն ստանդարտացված ցուցանիշների, նախատեսել երկրին բնորոշ երևույթներն արտացոլող լրացուցիչ ցուցանիշներ/աղյուսակներ
  - Ուղարկել աղյուսակները Իստատի գործընկերներին նախքան մայիսին կայանալիս 6.6 առաքելությունը
- Տարածման ենթակա բոլոր փոփոխականներին վերաբերող մեթատվյալների արտադրում
- Վերանայել տվյալների հավաքագրման գործիքները և մեխանիզմները, մասնավորապես ջրի վրա կատարված ծախսերի հաշվարկման համար
- Պատրաստել ծրագրի նախագիծ ՀՀ ԱՎԾ-ում ջրի հաշիվների հրապարակման համար (տեքստ, աղյուսակներ, գրաֆիկներ)